

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԹԵՍԻ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Ընդունելության թեստը բաղկացած է 3 մասից:

I մասը գնահատվում է 10 միավոր, ընդգրկված է հայերենի ուղղագրությանը և կետադրությանը վերաբերող 5 հարց, յուրաքանչյուրը գնահատվում է 2 միավոր:

II մասը գնահատվում է 30 միավոր: Տրված բնագրի հիման վրա անհրաժեշտ է կատարել 15 առաջադրանք, յուրաքանչյուրը գնահատվում է 2 միավոր:

III մասում առաջարկվում է փոխակերպել տրված նախադասությունները և կազմել գծապատկեր: Առաջադրանքը գնահատվում է 10 միավոր. յուրաքանչյուր առաջադրանքը գնահատվում է 2 միավոր: Փոխակերպումներում թույլ տրված ուղղագրական կամ կետադրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 0.1 միավոր, գծապատկերը չհամարակալելու համար՝ 0.5 միավոր:

Խնդրում ենք ուշադիր կարդալ առաջադրանքները, գրել հստակ, առանց ջնջումների:

Առաջադրանքները կատարելու համար հատկացվում է 120 րոպե:

ՄԱՍ I

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1. *Լրացնել բաց թողած տառերը.*

Ոսկեզ__ծ, բնօ__ան, որ__իցե, բամ__ա, բա__տ, զի__ել, հանդեր__, զին__ետ, ա__բասիր, պատ__գամբ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2. *Վերականգնել տրված բառերի անհնչյունափոխ արմատները (օրինակ՝ լուսաբաց-լույս).*

Թրատել _____ Քրոջորդի _____

Հովտաշուշան _____ Ժողովրդական _____

Որդյակ _____ Չմռան _____

Թշնամություն _____ Կենարար _____

Ողջունել _____ Ոսկրոտ _____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3. *Տրված բառերն ըստ անհրաժեշտության գրել միասին, անջատ կամ գծիկով.*

յոթ (ութ), արագ (արագ), գլուխ (տալ), մեջք (մեջքի), պար (ուսույց), ըստ (այդմ), ի (լրումն), ամեն (ոք), առ (այն), հայերեն (ֆրանսերեն).

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 4. Ընդգծել այն բաղադրյալ հատուկ անունները, որոնց բոլոր բաղադրիչները գրվում են մեծատառով.

Արշիլ Գորկի, Հին Հունաստան, Լյուդվիգ Վան Բեթհովեն, Հովսեփ Օրբելի, Մեսրոպ Վայոցձորեցի, Սողոմոն Իմաստուն, Հայկական Շախմատային Դպրոց, Չինաստանի Ժողովրդադեմոկրատական Հանրապետություն, Գի Դը Մոպասան, Սփյուռքի Նսխարարություն, Ղևոնդ Ալիշան, Ջորջ Նոեոլ Գորդոն Բայրոն, Վենետիկի Սուրբ Ղազար Կղզի, Ադրիատիկ Ծով, Դավթակ Քերթոզ, Տիգրան Բ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 5. Կետադրել.

Ձեփյուռը մեղմորեն օրորեց ցորենի հուռթի արտերը և հասկերի միջով մի սուսափյուն անցավ: Հեռվում կապտին էր տալիս Սյունյաց վիթխարի լեռնաշղթան որի բարձրաբերձ կատարներին տեղ-տեղ փայլվում էին ձյան սպիտակ պատառիկներ: Ներքևում անդնդախոր ձորի մեջ շառայունով հոսում էր Որոտանը խախտելով կիրճի անդորրը: Գետն իր տարերքի մեջ էր և հոսում էր խորտակելով ափի հողաթմբերը երբեմն էլ պոկում էր հինավուրց ընկուզենու փտած ձյուղերը և օրորվելով իր պղտոր ալիքների մեջ տանում դեպի հեռուներ: Մոտակա անտառից լսվում էին թռչունների երգի ելնեջները քաղցրահնչյուն յուրօրինակ:

ՄԱՍ II

Կարդալ բնագիրը և կատարել 6-20 առաջադրանքները.

(1) Հայոց հազարամյա մշակույթի պատմությունն ունի մի շրջան, որը վայրէջքների ու դժվարին վերելքի իր դասերով ներկայացնում է մեր ժողովրդի հարատևման, հոգևոր անմահության և անշեջ փառքի փայլուն ապացույցներից մեկը:

(2) Անօրեն բռնակալների անլուր հալածանքների, չընդմիջվող կոտորածների տասնամյակներում հայոց մշակութային կյանքը տվել է վերընթաց զարգացման մխիթարական շատ երևույթներ, որոնց մեջ իր ինքնահատուկ տեղն ունի Գլաձորի բարձրագույն դպրոցը կամ համալսարանը:

(3) Մեր միջնադարյան մշակութային պատմության մեջ ընդունված է Գլաձորի համալսարանի գրչական և մանրանկարչական ժառանգությունը ճանաչել իբրև ինքնուրույն հոսանք՝ բուն Գլաձորյան դպրոց: (4) Իր ակունքներում ունենալով բնաշխարհի բազմադարյան ավանդույթներն ու Կիլիկյան Հայքի անմրցակից արվեստի լավագույն գծերը՝ Գլաձորի գրչական, հատկապես մանրանկարչական դպրոցը արձանագրեց զարգացման մի նոր

աստիճան: (5) Գլաձորում ստեղծված ձեռագիր մատյաններում, հատկապես ծաղկողների՝ Հովհաննեսի և Մատթեոսի, ապա և Մովսիկի և իր գործընկերների մանրանկարներում ակնախառն գույների ընտրությունն ու համադրությունները, դիմանկարների հոգեբանական կերպավորումները կատարվում են աննախադեպ վարպետությամբ:

(6) Մեկ զրույցով ներկայացված պատկերը, սակայն, պակասավոր կլինի, եթե մոռանանք Գլաձորի ավանդները և հատկապես ավանդառուներին, այսինքն՝ նրանց, ովքեր, հաղորդակցվելով Գլաձորի լույսին և այդ սրբասուրբ օջախից առնելով իրենց հոգու անշեջ կրակը, նոր օջախներ բացեցին մեր բնօրրանի տարբեր մասերում, դարձան նոր լուսատուներ, մշակութային կյանքի նոր քարոզիչներ: (7) Այստեղ՝ Գլաձորի համալսարանում են կրթություն ստացել Ստեփանոս Օրբելյան պատմիչը, Հովհան Ռրոտնեցի և Գրիգոր Տաթևացի հոշակավոր գիտնականները, Խաչատուր Կեչառեցի բանաստեղծը, Արևմտյան Հայաստանի մեծ լուսավորիչ Հովհաննես Երզնկացին և ուրիշ բազմաթիվ վարդապետներ ու դպրապետներ: (8) Նրանք լույսի ու գիտության նոր կենտրոններ ստեղծեցին երկրի տարբեր վայրերում: (9) Այդպիսիներից են Տաթևի և Մեծոփա վանքերի համալսարանները, որոնք արյունոտ թաթար-մոնղոլների վայրենի տիրապետության շրջանում դարձան հայ ժողովրդի հոգու անմար կրակը վառ պահողներ, լույսի ու գիտության անշեջ օջախներ: (10) Գլաձորի մայրամուտից հետո Հովհան Ռրոտնեցին՝ Եսայի Նչեցու աշակերտը, փոխադրվելով Տաթևի վանք, այնտեղ համալսարանական կարգ ու կանոն ստեղծեց:

Ըստ Բ.Ուլուբարյանի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 6. 7-րդ նախադասությունից դուրս գրել 4 բաղադրյալ հաստուկ գոյական.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 7. 4-րդ նախադասությունից դուրս գրել 4 ածական.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 8. 6-րդ նախադասությունից դուրս գրել 4 դերանուն.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 9. 6-րդ նախադասությունից դուրս գրել 2 անկախ դերբայ և որոշել տեսակը.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 10. Որոշել 8-րդ նախադասության ստեղծեցին բայի եղանակը, ժամանակաձևը, դեմքը, թիվը.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 11. 8-րդ նախադասությունից դուրս գրել ենթական և ստորոցայլը.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 12. 6-րդ նախադասությունից դուրս գրել Ու հոլովման պատկանող 2 բառ.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 13. 5-րդ նախադասությունից դուրս գրել ներգոյական հոլովով գործածված 2 գոյական.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 14. 7-րդ նախադասությունից դուրս գրել բացահայտիչը և բացահատյալը և նշել բացահայտչի տեսակը.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 15. 7-րդ և 8-րդ նախադասություններից դուրս գրել տեղի պարագայի 2 օրինակ.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 16. 10-րդ նախադասությունից դուրս գրել միջադաս դերբայական դարձվածք.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 17. 1-ին, 2-րդ և 3-րդ նախադասություններից ո՞րն է պարզ, գրել նախադասությունը.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 18.8-րդ նախադասությունից դուրս գրել ուղիղ խնդրի 1 օրինակ.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 19. Կազմել 1-ին նախադասության գծապատկերը (համարակալումը կատարել բնագրի նախադասության վրա).

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 20.9-րդ նախադասությունից դուրս գրել հոմանշային 1 գույզ /ածականական/.

ՄԱՍ III

**ՓՈԽԱԿԵՐՊԵԼ ՏՐՎԱԾ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,
ԿԱԶՄԵԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԳԾԱՊԱՏԿԵՐԸ**

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 21.1 Բարդ նախադասությունը փոխակերպել պարզի ()

ա) Եթե հայոց ազգը համախմբված լինի և՛ մտքով, և՛ գործով, հռոմեացիք չեն կարողանա մտնել Հայաստան:

բ) Այս տղան, որ երբեք չի տեսել իր նախնիների հայրենիքը, խորապես կապված է պապենական հողին:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 21.2 Պարզ նախադասությունը փոխակերպել բարդի.

ա) Մի առավոտ զորապետը Երվանդին ուղարկեց կայազորի մոտ՝ իրենց ձիերը տեսնելու:

բ) Խաչքարերի անտառը երևի Վարդանանց նահատակներն են՝ քարացումից ասես կենդանացած:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 21.3 Ուղղակի խոսքը փոխակերպել անուղղակիի.

ա) –Մենակ եմ եկել, հա՛յր,- խոնարհվելով շնչաց որդին,- մի՛ մտածիր անցյալի մասին:

բ) Ես մտքումս ասացի. «Հետաքրքիր է՝ ինչ կասի մայրս, երբ տեսնի, թե որքան շատ հատապտուղ եմ բերել»:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 21.4 Անուղղակի խոսքը փոխակերպել ուղղակիի.

ա) Ատոմը մյուս նախարարներին ասաց, որ նամակները տեղ հասցնեն, պատասխանները վերցնեն և, ինչ էլ լինի, գան, հավաքվեն իր մոտ:

բ) Նա ինքն իրեն ասում էր, որ ինքը պետք է ամուր լինի. պետք չէ ենթարկվել այդ մարդկանց ազդեցությանը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 21.5 Կազմել տրված նախադասության գծապատկերը (համարակալել նախադասատույնները).

Թե տիրես, մե՛ծ Շահ, դու նրա սրտին,
Թաթուլն էլ անգոր կրնկնի ոտիդ տակ,
Հանգիստ կտիրես և Թմուկ բերդին,
Որ չես կարենում էսքան ժամանակ: